ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի

1. «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

2. «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

3. << Ջերմուկի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

1-3-րդ կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն բժշկական կրթություն, առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի 3 տարվա ստաժ

2) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր)

3) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝

ա/ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման, աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խարխուսանքի միջոցների կիրառման, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝

գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ

5) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում

Լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

2) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

3) Օտար լեզվի բավարար իմացություն

4) Առողջապահության կազմակերպչի որակավորում

<u>Մրցույթը կանցկացվի՝ 2015 թվականի դեկտեմբերի 25-ին</u>

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9:00-12:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2015թվականի նոյեմբերի 25-ը

Մրցույթը կկայանա ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի շենքում /ՀՀ Վայոց ձորի մարզ ք.Եղեգնաձոր, Շահումյան 5/:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ,անձնակազմի կառավարման բաժին /ք.Եղեգնաձոր Շահումյան5 , հեռ./0281/ 2-55-95: